

63. ԴԱՐՄԱՆԱԳՈՂԻ ՃԱՄՓԱ

Մեծերն ասում են՝ մի ձսեռ ուրիշ երկրից մեր երկիրը մարդիկ են եկել, որ իրանց սոված անասունի հոտ խոտ տանեն, խոտ ըլել չը, դարման են գողացել: Լիար բաց ըլերու վրա լա ըլել, վռագել են և ճամփին շաղ տալով գնացել են, էդ ճամփեն կոչվել և Դարմանագոյի ճամփա:

64. ԿՆԱՐԱՐ ԿԱՄ ԿՆԴԱՐԱՐ

(Թումանյանի շրջան, Օձուն գյուղի մոտ)

Ուլունարարի ձորի փեշին մի տեղ կա, որ տեղացիք Կնարար են ասում, մենք՝ Կնդարար: Օերերը պատմում են, որ ժամանակին էդտեղի ջուրը բուժիչ հատկություն ասունեցել, ծանր հիվանդները եկել են, խմել, լողացել, առողջացել են: Դրա համար էլ ժողովուրդը էդ տեղին կենդանարար անունն աս տվել, տեղական տառադարձությամբ՝ Կնարար:

Ժողովրդի մի մասն էլ պատմում աս, որ արարները հասել են Լոռի, գորքի մեջ հիվանդություն աս առաջացել, ենդով էլ բժշկություն ենքան չի էլի. հիվանդներին մեկուսացրել են, տարել Կնդարար հանդամաք, ժողովրդին թողել չեն ելք ու մուտքը, էդպես էլ հիվանդներն ինքն իրան բուժվել են:

65. ՉԱԹԻՆ ԴԱՂ

Չաթին դաղ պարսկերեն նշանակում է դժվարին սար: Պարսիկները սարերի մի շարք այդպես են կոչել, որովհետեւ չեն կարողացել ենտեղ պատապարված հայերին հետապնդել, ճնշել, ցեղը կտրել: Մարդիք

ծապան են կապել թեք տեղը բնձրանալու հրմա: Մեծերի ասելով հայերին էդ սարերի լարն ու անտառներն աս պաշտպանել: Ընդիքարք շինած եին սանդեր կան. էրկանքներ կան, մարդիկ հացաեատիկ են աղացել: Նրանց սնունդը գլխավորապես կորեկն աս ըլել, վարի անտառի կանանչն ու մեյվան: Դեռ ըսօր էլ ասեն տեսակի վայրի մեյվա կա էդ անտառներումը, և ժողովուրդը օգտագործում աս:

66. ՀՈՌՈՄՄԻՄԻ ՀԱՆԴԱՄԱՍԸ

(Թումանյանի շրջան)

Պարսիկները որ Չորագետը գրավում են, հայերը աղ ու հացով գնում են աղաքները. խնդիրք են անում, որ դուրսի հողերը բախշեն իրանց, թե չէ սովից կկոտորվեն: Պարսիկները պայման են դնում, ասում են՝ բերեք մեր փահլեանը ձերի հետ կոխ բռնացնենք, թե մերին հաղթեց՝ կբաշխենք, թե չէ՝ սալ չենք:

Չորագետում մի դոչաղ կին աս ըլլմ՝ անունը Հոռոմսիմ. մի անգամ գամեջը կթելիս հայվանը պոչով խփում աս սրան, աս ջգրվում աս, գոմջի ճակտին հենց տալիս աս, գոմեջը գլխի վրա պտիտ աս գալի, վեր ընգնում: Գալիս են էս Հոռոմսիմին խնդրում են, որ պարսիկների փահլեանի հետ կոխ բռնի: Հոռոմսիմն ասում աս. – Ես հայ եմ, նա պարսիկ, իմ ջանը նրա ջանին կպցնել չեմ, էրկուսիս էլ մինչն կոնատակիրնուս թաղեցիք, ենքան իրարուց հեռու ըլենք, որ մեակ ձեռներս հրարու հասնի, իրար ձեռից բռնենք ու քաշենք, տեսնենք, ով ում դուրս կքաշի՝ նա էլ կհաղթի:

Ըտենց էլ անում են: Հոռոմսիմը մի երգեն ձեռնուց աս քաշում ձեռը, մինչն արմուկը պինդ կապում աս, բռնում աս պարսիկի

կոնիցը, հենց քաշում աս, որ դրան դուրս աս հանըմ ու քցում էն կուռը:

Պարսիկները թողնում են, հեռանըս են, հողերն էլ սնում են հայերին, եանդասասի անունն էլ սնում աս Հոռոսմիսի հանդասաս:

67. ԱԳՌԱՎԻ ՎԱՆՔ

(Թումանյանի շրջան, Դսեղ գյուղի ծայրին)

Դսեղի ձորի սուրբ Գրիգորի վանքը սարքելու վախտը ժողովուրդը նստում աս հաց ուտելու: Մեծ պղնձից ճաշ են լցնում, էս վախտը մի ագոավ ըսկսում աս պղնձի վրա պտտվել, մարդիկ նրան հասկանում չին, ագոավը ինքը իրան գցում աս պղնձի մեջը: Պղնձի ճաշը շուռ են տալի, տենում են օձը սիջին սատկած: Ագոավի համար մատուռ, վանք են սարքում, որը մինչն հմի էլ կա և կոչվում աս Ագոավի վանք:

68. ԳՉՐԱՎԵՐ

(Գուգարքի Հասգաչիման գյուղի մոտ)

Ասում են, թե այս ավերակների տեղում առաջ գյուղ է հղել, որն ունեցել է շատ դաժան մի գլխի: Հարկ հավաքելիս, պորակոչի կանչելիս և ուրիշ առիթներով գլխիքը այնքան է նեղում գյուղացիներին, որ նրանք ստիպված թողնում են իրենց տունն ու տեղը և հեռանում գյուղից: Ժամանակ անց, երբ գլխիքը ծերանում է և սգում. որ մեռնելու օրերը մոտեցել են, որոշում է նորից սարսափ ապրել գյուղացիներին: Կանչում է գյուղի քահանային, հաղորդություն ընդունում և պատվիրում է նրան մեռնելուց հետո իրեն թաղելու փոխարեն, կախ տալ մի րարձր ծառից: Երբ գլխիքը մեռնում է, քահանան կատարում է նրա պատվերը: Մոտակա գյուղերի բնակիչները տեսնելով ծառից կախված գլխիքին, ուրախանում են և հավաքվելով նրա դիակի շուրջը՝ պար են բռնում ու երգ ասում:

Այդ ժամանակ ծառի մոտով անցնելիս է

լինում սովորով: Նկատելով կախված գլխին և կարծելով, որ դա գյուղացիների արածն է. նա հրասայում աս այրել գյուղը: Սովորվի երանանը անսիջապես կատարվում է: Գրանից հետո գյուղատեղի ավերակները կոչվում են Գյրավեր:

69. ՕՄԱՐԻ ՁՈՐ

(Թումանյանի շրջան)

Լորուտ գյուղի մոտ մի ձոր կա, որ կոչվում է Օմարի ձոր: Օմարը եայտնի ավազակապետ էր: Նա իր խմբից 4 հոգի վերցնում, գալիս է Լորուտ և հինգ գեղեցիկ հարսներ է պահանջում: Գյուղի քահանան կազմակերպում է գյուղի մարդկանց և ինքր դուրս է գալիս գյուղից: Գյուղացիք Օմարին տանում են իրր պատիվ տալու, որ հասնում են գյուղի կենտրոնը, կրակոցներ են լսվում, Օմարը ուրախացած րացականչում է. «վուր, վուր»: Նրա «վուրը» ապրանջան էր՝ նշանակում էր սպանեցեք հայերին: Հենց որ Օմարը «վուր» է անում, գյուղացիք սրան էլ են սպանում՝ քարշ տալով տանում են գյուղի մոտիկ ձորում թաղում, դրանից էլ ձորը ստանում աս Օմարի ձոր անունը:

70. ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԴԻՐ

ՇԱՀՎԵՐԳՅԱՆԻ

ԱԶԳԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Արապը իր երեք որդիների՝ Իսպիրի, Թաթուլի և Դոխիսի հետ Բժնիում սպանում են իրենց քրոջը առևանգած պարսիկ խանին, եեռանում են այդտեղից, գալիս են Լոռի և րնակություն հաստատում Քոբեքավանքի մոտ: Այստեղ էլ մահափորձ է կազմակերպվում պարսից շառի դեմ, եղբայրները փրկում են նրա կյանքը: Շահն իր ապատարարներին ավելական կոչում է շնորհում, ապատում հարկատվությունից, պարգևում է Այգեհատի տարածքը որպես սեփականություն: Այս դեպքը առիթ է հան-

դիսանուս Շահվերդյան ազգանվան (շահի տված), որով կոչուս են հետագայում Արաւլին և նրա երեք որդիներին:

Գուղայիները պատմում են, որ սինչի սեր դարասկիպը Շահվերդյանների տանը պահպանվում էր Շահի տված երասանֆարսանը սագադաթի վրա գրված, իսկ գուղի գերեզմանոցում կան այդ տոեմի շիրմաքարերը:

71. ԽԱՆԲԵԳՅԱՆ ԱԶԳԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Էրպրումում մի խելացի, աշխատասեր, հնարամիտ սարդ է լինում, Ներսեսյան ազգանունով: Էս մարդը աշխատում է խանի մոտ, ղեկավարում է նրա ողջ տնտեսությունը, օրեօր, տարեցտարի կրկնապատկելով նրա նկամուտը: Խանը մեծ եարեմ է ունենում. նրա գործը սկսվում է վերջանում է հարեմում:

Խանը հանձինս Ներսեսյանի տեսնում է իր լավագույն հենարանին և որոշում է նրան իրեն ազգակից դարձնել, հավատը փոխել սալով: Խանը Ներսեսյանին ճաշի է հրավիրում, հյուրասիրում է և ասում, որ ուզում է նրան կարգել իր գործերի ղեկավար, նրա ընտանիքը, որդիներին նկուղից հանել, քարձրացնել երկրորդ հարկ և նրա հարեանությամբ սսպրիլ ինչպես հավասարներ: Այս բոլորը մի պայմանով՝ որ հավատը փոխի: Մտածելու ժամանակ է տալիս և սպառնում, որ եթե իբ առաջարկը չընդունի՝ կգլխատի: Որոշված ժամկետին խանը իր մոտ է կանչում Ներսեսյանին և հարցնում է պատասխանը: Սա ասում է, որ իր ապգը չի ուրանա: Խանը սպառնում է հրապարակավ գլխատել. եայր չի ընկրկում: Խանը հրաման է տալիս նրան կապել հրապարակի մի ծառից, հավաքել է տալիս ժողովրդին, Ներսեսյան ընտանիքը, հարցնում է.

– Համաձայն ես փոխել հավատդ ու ազգանունդ:

Հայը պատասխանում է՝ ոչ: Խանը սպառնում է հայի գլուխը կտրել տալ և իր առաջարկը կրկնում է մի քանի անգամ: Հայը մնում է անդրդվելի: Խանը սարսոնում է նրան կենդանի կտոր-կտոր անել, սկսելով քթից: Դսեհիձը կտրում է եայի քիթը, սա չի ընկրկում. խանը հրամայում է և դսեհիձը կտրում է ականօները: Հայը ասում է. – Գլուխս էլ թոցնել տուր, սեկ է՝ հավատս չեմ ուրանա:

Խանը պայրացած հրամայում է արձակել կապերը, թողնել նրան անքիթ ու անականօ ման գա. որ իմանա. ինչ է նշանակում ջարժել խանի պայրույթը, և արեամարհանքով, ծաղրանքով նրան ասում է.

– Դու իմ ազգանվան կարիքը չունես, էդպես դու իման էլ ես, ընկ էլ ես:

Դրանից էլ առաջ է գալիս Խանուրեգ Խանբեգյան ազգանունը, որը իրենց հետ Հայաստան են գաղթում այդ եայի որդիները:

72. ԱՂՎԱՆՅԱՆ ԱԶԳԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Մեր պապերի սրտամելով մեր ապուպապը Աղվանստանից ա էկել Լոռի: Աղվանստանում մեր ապուսրսսլին որ սպանել են, իմ ապուպապի կինը ունեցվածքը ծախել ա, ոսկի դարձրել, էրկու ըրեխին առել ա, փախել, որ երեխանց էլ չսպանեն:

Էկել ա, էկել, ճամբին մի էրեխեն ա մեռել, հասել ա Օձուն, մեկել էրեխին նոքար ա տվել մի հարուստի, ինքն էլ չլերով է փաթաթված ըլել, ոսկիքը շանց չի սլիլ, ապրել է մի աղքատ տան մեջ մինչև տղին մեծանա: Եդ կնգանը Օձունում ասել են չուլլու կնիկը, երբ որ տղին պսակել է, ոսկիները մեջտեղ ա հանել, մեծ ազդ տնտեսություն դառել, բայց անունը մնացի ա Չուլլվանց: Հետագայում իրա հկած երկրի անունով Աղվանյան ա գրվել, համա գեղացիք ասել են Չուլլվանց:

**73. ԱՅԲԵԿՑԱՆ ԱԶԳԱՆՎԱՆ
ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Այբեկյանների գեբդաստանը չքավոր ա ըլել, թին ծանր ա ապրել, բայց ազգի ներկայացուցիչներն իրենց պահել են արժանապատվությամբ ու հարստությամբ: Դրա հասար էլ կատակով նըանց մասին ասել են. «Այ բեկը», դրանից էլ սնացել ա ազգանունը՝ Այբեկյան:

**74. ԲԵԿԹ-ԱՇՅԱՆ ԱԶԳԱՆՎԱՆ
ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Պատրոնիս ոնխը վինձ ա ըլել, ուշունց տվան ա ըլել, հպարտ ա ըլել: Տասնեինգ հատ էջ են ունեցել, նոքար են ըլել պահելիս: Դրա հընա Բեկթաշյան են ասել՝ յանի թե շաղ տլոդ»:

75. ԳՈՒԳԱՐԳ

Գուգարք կամ Գուգարաց աշխարհ տեղանունն առաջացել է Գուգ, որ նշանակում է ոսպմիկ և Գուգապ, այսինքն՝ ոսպմական միավորում բառերից:

Գուգարք նշանակում է ոսպմիկ մարդիկ կամ ոսպմիկ ցեղեր, իսկ Գուգարաց աշխարհը՝ ոսպմիկ մարդկանց կամ ոսպմիկ ցեղերի երկիր:

76. ԿԱՆԳԱՌԳ

(Նոյեմբերյանի շրջան)

Կանգառքը Գուգարքի ծայրամասային նահանգներից է, այն տեղը, որտեղ կանգնեցվել է թշնամու առաջխաղացումը:

Կանգառքը նշանակում է պաշտպանության դուռ: Այլանների արշավանքը կասեցվում է Կանգառքում և եայոց Տրդատ 3-րդ թագաւորն այստեղ ամուսնանում է արսնների արքարադուստր Աշխենի եետ:

77. ԿՈՂԲ

*(Նոյեմբերյանի շրջան,
Նախկին անունը Բարանա)*

Երբ լեպգիները եարձակվել են, գլուղի քահանան ժողովրդին հավաքել է բերդանման պարիսպներով շրջապատված եկեղեցու մեջ: Ձենքը նոր ա ստեղծված եղիլ, և ստեղծող վաբպետը եղել է հենց ինքը՝ քահանան:

Նվաճողը գլուղի վրա հարձակվել է գուռնայի և դիոլի նվագով, հույս ունենալով, որ այդ ձեով խուճապի կենթարկի բնակիչներին և կգրավի գլուղը: Ձորքի վրա եկեղեցու լուսանցքից արձակված առաջին գնդակը խրվել է գուռնայի փողի սեջ:

Լեպգիները իրենք են խուճապի մատնվել, տեսներով, որ էստեղ ուժեղ դիմադրություն կա, ժողովրդի մոտ կամք ու պենք կա, փախել են: Նրանց փախած ճանապարհը կոչվում ա «Լեպգու կածան»:

Գլուղը շրջապատված է լեռներով, բոլոր կողմերից փակ է, կողք է, դբա համար որևէ նվաճող չի կարողացել գրավի: Ժողովուրդն իրա պատասպառությունը, ամբողջությունը գտել է այդ լեռների մեջ ու այն կոչել Կողք:

78. ՂԱԼԱՉԱ

(Նոյեմբերյանի շրջան)

Առաջներում գեղի անունը եղել է Ռխաձոր, գնդն էլ բերդի կշտին ա ըլել: Ժողովուրդը մպորութին էրն անըմ, ամառը դագա էին ջինըմ, մեջն ապրում:

Պարսիկները որ եկել են, ժողովուրդը փախել է, մտել բերդը: Պարսիկները ջուրը կտրել են, ասել են. «Ղարս աջ» (րերդի դուռը բաց):

Դրանից եդր գեղի անունը դատել ա Ղալաչա:

79. ՂԱԼԱՉՍ. ԲԵՐԴԸ

(Նոյեմբերյանի շրջան)

Ղաղաշա բերդը շինում էին, շինում՝ քանդվում էր. իսաստուններն ասում են. որ թե սի տղա երեխա դնեն պատի մեջը, շի քանդվի. տղեն էլ սիասորիկ պրտի ըլի:

Վերցնում են մի տղա են դնում պատի սեջ, պատում են: Տղի ձենից վրա եսսած սերը պատվում ա բերդի բոլորը, գոռում-գոչում, մապերն ա պոկոտում, բայց ոչ ոք ուշք չի դարձնում վրեն:

Վշտից պղկոտում ա ծծեըը, բերդի պատովն ա տալի: Պատը արնոտվում ա, և եդ արունից մնում ա նամ:

Ըսորիս էլ բերդի պատին էրկու տեղով մուգ խոնավություն կա:

80. ՂՈՇՂՈԹԱՆ

(Նոյեմբերյանի շրջան)

Ղոշղոթան գյուղի տեղում ժամանակին եայի ու թուրքի վեճ էր: Մի եայ Բուրջ բարի անըմով էկել ա ըստի մնացի, գեղատեղը շի տվել թուրքին: Թուրքը ճաղը կտրած ասելիս ա ըլել «ղոշղոթանրին», այսինքն՝ լծիր գուրթանըդ, եաղթությունը քունն ա, գեղատեղը քունն ա:

Գյուղի անունը մնացել ա Ղոշղոթան:

81. ՍԸՐԲ ՍԱՐԳԻՍ

Աթենքի թագավորը գրություն ա դարգում եայոց թագավորին, թե քառասուն եսսար ջան դալգի, անաստվածները մտել են իմ եողը: Հայոց թագավորը մտածում ա, թե ինքր որ քառասուն եսսար ջան դարգի, եողը կրացվի: Խորեուրդ ա անում, Սարգիս անունով մեկր առաջ ա գալի, ասում ա. — Եոստունիննը իմ ասած տղեք տուր, ես էլ եետը քառասուն, գնամ քառասուն եսսար ջանի գործ կատարեմ:

Թագավորը տալիս ա. սա գնըս ա: Գընըս ա. եասնում Աթենք. ներկայանում ա թագավորին. ասում ա. — Ես քառասուն եսսար ջանի գործ կկատարեմ:

Թագավորը կովի ա դարգում. սա իրա խոստումը կատարում ա: Հույների թագավորը ստածում ա, որ սըանց քառասուն ջանը էսքան գործ արեց. բա քառասուն եսսարը ինչ կանի: Որոշում ա էդ մարդկերանց գրուխը տալ: Բաղաքի մեջ շի կարում սպանի, կանչում ա նազիր-վեզիրներին, ասում ա. «Ամեն մեկդ ձեր աղջկան պտի կնություն տաք դրանցից մեկին ու ամուսնությունից եետո ձեր սղջիկները եարմար մոմենտ գտներով, պտի իրանց մարդկանցը ապանեն»:

Թագավորը իրա աղջկանը՝ Նունիկին տալիս ա Սարգսին: Մի քանի վախտ ապրելուց եդը Նունիկը Սարգսին ասում ա. — Ես քու եետ անկեղծ եմ, եորս նայատակն էս ա:

Սարգիսը եարց ու փորձ ա անում ընկերներին, տենրմ ա, որ ոչ ոք մի բան էրու գիդեն ոչ, մենակ Նունիկն ա անկեղծ: Սարգիսը եայտնում ա թագավորին, որ ֆորսի են տուս գալի, Նունիկն էլ ինդրում ա հորը, որ ինքն էլ եետները գնա որսի: Բաղաքից դուրս են գալի դեպի եայրենիք, էլ դրանց թուրը քյար չի սնի: Գարով եասնում են Դվալի ձորը, բուք ա անում, թիփի, Նունիկը խեխտվում ա, մեռնում: Նունիկին թաղում են Կուրթանի բրդին, իրանք գնում Լոռի բերդը: Սարգիսը որ մեռնում ա, թաղում են Նունիկի կողքին, էդտեղ եկեղեցի կառուցում, անունը դնում են Սըրբ Սարգիս:

82. ԼՈՌԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

Նիկոլայը Լոռիս-Մելիքովին կանչում ա, ասում ա. «Դու Արարումը թուրքի ձեռիցը վե կալ, իրանց էլ ըտեղանքից քշի, Հայաստանը տամ քեզ»:

Լոռիս-Մելիքովը մի քշերվա միջին թուրքերի դիմացի դուզերրմը էնքան դաղարկ

չադրնի ա վե թողում, որ ասելու քն. ասում են աստղերին թիվ ու հեսաբ ա ըլել, նրա չադրնհրին թիվ ու հեսաբ չի ըլել: Թուրքերը ըռավողը վեր են կենըս, տենըս: Ասում են. «Պահ, պահ, էս որ սրանց չադրնին են էսքան, բա պորքը ինչքան կլի»: Սրանք գիդեն թե են չադրնին լիքը պորք ա, թող են անըս ու փախչում: Լոռիս-Մելիքովը պորքը քաշում ա ու ընկնում դրանց եղևա, տանըս Արպրումեն էլ անց կըցնըս, որա սի բան էլ դենը անց կենըս: Նիկողայր որ տենում ա Լոռիս-Մելիքովի հունարը, ստածում ա, թե իրան խոսքի տերը ըլի, Լոռիս-Մելիքովը կդառնա թագավոր, կուժեղանա, եղով էլ իրան վնաս կտա, թե խոսքի տերը չըլի...

Լոռիս-Մելիքովին կանչում ա պարատ, պատիվ ա տալի, անթիվ նվերներ ա տալի, հետն էլ թույն: Լոռիս-Մելիքովին թույն ա տալի, սպանըմ:

83. ԹԵՎԱՎՈՐ ԲԵՄ

(Թումանյանի շրջան,
նոր անունը Դանուշավան)

Այգեհատ գյուղի ձորումը մի խաչ կա, որին ժողովուրդը Թեավոր բեմ ա կոչում: Գյուղի ծերերը պատմել են, որ. «Ժամանակին էրկու չոբան ոչխարները բերում են ըսի արածայնում: Ըրիկունը կաթը կթում են թող անըս, որ ըռավողը տըքցնեն ուտեն: Էշերը օձը գալի մտնում ա մեջը: Չոբանին քշերով վեր են կենըս, կրակ անըս, վեր կաթը դնեն տաքցնեն ուտեն: Կաթը դնում են թե չէ՝ մենի մի դուռ օթումը պտտվում ա, քշանըս ա, որ իրան գցի կաթի մեջը: Սրան քիջ են անում, մենի ա գալի, ըլետ քիջ են անում, համա դուռը իրան քցում ա պղինձը:

Չոբանին կաթը թափում են, տենըս են՝ օձը միջին էփել ա: Ղըջի հիշատակին ըտի խաչ են ջինել տալի, ու անըսը դընըս Թեավոր բեմ:

84. ԴԵԲԵԴ

(Գուգարքի շրջան)

Գյուղը էստեղ եկել ա Մարցիկ 1858 թվին: Տասնըներք տնտեսություն ա ըլել: Էկած տարին ինը կին ա ազատվել, ինն էլ տղա են բերել: Ասել են՝ էս գեղը սեպ վրա էկավ: Անտառ ա էլի սեծասանությունը՝ բարդուտ, կաղնուտ, ասեն տեսակի ծառ, ծաղիկ էլի ա: Մասուխը, սոջը, տանձը, խնձորը եղել են, անասունները հեշտ են պահել: Գութանը տասներկու լճով վարելիս են ըլել, մարդիկ անհատ ֆողեր են րածանել, հետո գութանով վարել են: Հարուստները անասունները պահում էին ամառանոցումը: Սկզբում գյուղի անունը եղել ա Խաչի գյուղ (Ղարախաչ), հարևան գյուղացիք Ալըրեքսը են ասել, մթամ թե ցած տեղ: Խորերդային կարգերի օրոք մեր գյուղի անունը փոխել են, գեղի միջի գնացող ջրի անունով դրել են Դեբեդ:

85. ԶԻԼԱՎԻ ԿԱՊ

(Թումանյանի շրջան)

Անցյալ դարի սկզբին Կողր գյուղի Ջավադ բեկի նոքյար Ալիխանյան Ջիրավը իր բնկեր Խուդինի հետ փախչում, գալիս է Օձուն: Ճանապարհին լեզգիները կտրում են նրանց առաջը ե թույլ չեն տալիս մտնել Ագարակ: Երկու ընկերներով դիրքեր են մտնում, կռվում են լեզգիների հետ ե փախուստի մատնում նրանց:

Կովի վայրը եիմա կոչվում է Ջիրավի կապ: Կովի վայրում կա Ջիրավի անունով հուշաքար:

86. ՕՁՈՒՆ

(Թումանյանի շրջան)

Օձուն գյուղի անվան մասին տարրեր պատմություններ են անում տեղացիները:

Մի սասն ասում ա, թե Օձուն ա կոչվել գյուղի վանքը օծելու (օծելը փոխվել ա Օձունի) օրվանից:

Ուրիշներն պատմում են. թե գյուղը դրանից առաջ ա գոյություն ունեցել, էս եկեղեցու տեղն ուրիշ եկեղեցի ա ըլել, որ էդ եկեղեցու եոզեորական սեծերից սնկին. որ առապելական ուժի տեր ա ըլել, սի հրեջ օձ ա հանդիսել, սպանել ա, օձն էլ սատկելուց եդը քար ա դառել: Էդ քարը հըմի էլ կա վանքի ղաքին, եսկա օձ գավապանը բերանին:

Մի սասն էլ ասում ա, որ գեղատեղում օձ շատ ա ըլել, դրա համար էլ կոչվել ա օձերի երկիր, օձերի քաղաք, Օձուն:

Մեր պապերի պատմելով Օձունի ժողովուրդը բոյով, խոշոր, եսկա մարդիկ են եղել: Ջարսանք են պատճառում գերեզմաններից դուրս եկող նրանց սեծ ոսկորները: Ճարտար լնվու են ունեցել: Մեջիսում նրանցից մեկի մասին (Հայրապետի) ասել են՝ էս ինչքան տիտան մարդ ա, դրանից ապգանունը՝ Տիտանյան Հայրապետ: Հրմի էլ Տիտանյաններ Օձունում շատ կան: Բայց տիտանները վերացել են, նրանց ժառանգները Օձունի սովորական մարդիկ են:

87. ՍԸՐԲ ՕՂԱՆԱ ԽԵՉԸ

Սուրբ Օեանի խեչը Մղարթի հանդիպումն ա Ուլունլարի վերին կոանը:

Սուրբ Օեանն իր իուլցից դուս ա գալի, տննում ա, որ ուշար օձը մատն ի վեր իջել ա, ուլում ա ժողովրդին խմի: Ղամշով տալիս ա, տեղն ու տեղը քար ա դառնում, քնթիցր ջուր ա կաթում, որը, ասում են, եկեղեցու թնդոցն* ա:

Մինչի օրըս աչքերը վրեն ա, ինքն էլ քար կտրած մնում ա:

* Թափվող տեղանքը (Ծ.Կ.):

88. ՍԸՐԲ ՕՂԱՆԱ ԹՆԴՈՅԸ

Սուրբ Օեանը օխտը սոնթ ա ունեցել: Մի օր իրան սոնթին դըրկում ա, ասում ա՝ գնա էն դարը, տես էն ինչ ձեն ա գալի: Էս սոնթը գնում ա, ետ չի գալի. էն մնին ա դրկում, սա էլ չի գալի. տես օխտին էլ իրար եդնան դրկում ա. մինն էլ ա ետ չի գալի: Սուրբ Օեանը վեր շատ ճամփա յա պահում, տենում ա օքմի չըկա, ինքն ա գնում: Գընում ա տենում ըտի մի եեյվարա վիշապ, էտ օխտը սոնթին էլ կուլ ա տվել, ուռել, փքվել ու պոռտիկ ըլել: Ասում ա. – Անիծվես դու, անիծվես, տեղն ու տեղը չորանաս, քար դառնաս, պորտիցդ էլ ջուր գա, ջուրն էլ դեդ դառնա, դե շուտ մոնթերիս վեր ածա:

Վիշապը ծեռաց տեղն ու տեղը չորանում ա, պորտիցն էլ ջուր ա գալի, ինչքան եիվանդ, յարալու ըլեր գնին ընդի, էն ջրովը լվացվին. լղանին ու սղանին, գին տուն:

Էն օխտը մոնթի գերեզմանն էլ ընդի ա, օխտը տապանաքար կա:

89. ՕՂԱՆ ՕՂՆԵՑՈՒ ԱՆՁԸ

Օեանես Օձնեցին Օձունում ա ծնվել, տասնմեկ տարի կաթողիկոս ա եղել: Կաթողիկոս եղած վախտը մեր եկեղեցին վերանորոգել ա: Օձունի ժողովուրդը նրան չի եարգել, պատճառը էն էր, որ նա իրան եամա իսասակը ծածուկ սիրեկան ա ունեցել, դրա եմա էլ ժողովուրդը նրան ատել ա. տեղափոխվել ա Արդվի գյուղ, ընդեղ էլ մի եկեղեցի ա շինել:

Օձնեցին ասել ա. «Հենց տեղ գնալ պտեմ, որ Օձունը չերես, Օձունից էլ մարդ չտենամ»:

Հին մարդիկ ասում են, որ Օձունում, Օձունի մարդն առաջ չի գնում, րասլամիթ չի ըլում, դեռ եմի էլ եին մարդիկ ասում են, որ Օեանես Օձնեցին գյուղի ժողովրդին անիծել ա, ասել ա. «Էս գյուղի մարդը չաճի»: Գյուղի մեծությանն ու ժողովրդի շատությունը մեր գեղիցր ենքան էլ առաջավոր

մարդ չի ըլլում, հթի լավ մարդ էլ ա ըլլում. չի
երգարում, շուտ ա մահանում:

90. ՕՉԱՆ ՕՉՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Պապերից լսելով Օհանես ՕՃնեցին վարդապետ էլած չախը կույսերից սեկի ենտ գործ ա ունենում, կույսը հղիանում ա: Ժողովուրդն ասում ա՝ վարդապետից ա: Նեղացել ա, որ իրան գրպարտել են, ասիլ ա. «Ես պտի ՕՃունից գնամ, էնքան գնամ, որ ՕՃունը չտհնամ»:

Ժողովրդին հավաքել ա, աղոթք ա արել, ասել ա. «Տիր, մանուկը լիպու ըլի քեզանով, որ ինքն ումնից ա»:

Մանուկը լիպու ա ըլի, ասիլ ա՝ ես ֆլան հովվից հմ:

Օհան ՕՃնեցին ՕՃունից գնացել ա Արդվի, եկեղեցի ա շինել, բնակվել ա որպես Աստծու մոտ հավատալու, տարենը մը անգամ ա կնոջ մոտ գնալիս էլել, մի մենակ էդ նշանավոր օրը:

91. ՕՉԱՆ ՕՉՆԵՑՈՒ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՄԱՍԻՆ

Օհան ՕՃնեցու գերեզմանը գտնվում ա Արդվի գյուղից վեր՝ մի դքի վրա կառուցված վանքի մոտ: Գերեզմանի քարի տակին եամարյա հող չի մնացել, քարը շրջվել ա: Հիվանդատերերը քարի տակի հողը որպես դեղ տվել էն հիվանդին, ոչխարը ծաղիկ ա ընգել, վերել էդ հողի վրա ջուր են ածել, ջուրը հոսելով իջել ա ներքե, որ ոչխարը լամի, փրկվի: Էդ եույսը համ մարդկանց ա բուժել, համ անասուններին: Էդ եողը մինչե ըսօրի սրբի տեղ բռնում ա:

ՕՃնեցու գերեզմանի եողի առասպելական ուժի գինը էնդար բարձր ա ըլել, որ տասնութ թվին, եր որ թուրքը հարձակվել ա Հայաստանի վրա, մի թուրք իրա պինդոր տղին թափշուր ա արել, թե րան ա, կհասնես ՕՃնեցու գերեզմանին, նրա գերեզմանից հող կբերես, նրա գերեզմանի հողն սամեն ինչի դեղ ու դիր ա:

92. ՀՈՎՀԱՆ ՕՉՆԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Լոռում հնում Օճունք. հսի Ուզունլար գուղ կա, որից դենը. Արդվի գյուղում մի ընտիր եին եկեղեցի կա: Հովհան Օճնեցին վարդապետ հղած ժամանակը ապրում ա ըտի ու աշակերտներ սովորյնում: Էդ տարիներին հուլները Լոռին տիրած են ըլլում. Կուրթանանց ձորումը մի մեծ վանք են շինում, ամրոջ միաբանությունը ապրում ա ըտե, ժողովրդի եաշվին ու ըտեղից հրանանգներ ա տալիս ժողովրդին: Լոռվա ծերերը պատսել են, որ դրանք ժողովրդին տանջում էին, պատժելու համար տախտակ էին ծակում, անցկացնում գլուխներով, ուսերին նստում, ման ածում, գլխներին պոպոք ջարդում: Հովհան ՕՃնեցին մտածում ա՝ ոնց անք, որ ժողովրդին ապատի, ուզում ա Լոռվա ժողովրդին ապստամբացնի, որ հուլներին քշեն երկրից, բայց ժողովրդին էնքան էին ճնշել, որ դատել ա վախշուկ ոչխար:

ՕՃնեցին լսում ա, որ Հոռմի թագավորի տղեն շատ ծանր հիվանդ ա, ոչ մի բժիշկ չի կարում լավացնի: Ինքն էլ հայտնի բժշկություններ գիդա, վեր ա կենում ու գնում Հոռմի թագավորի մոտ, հայտնում ա, որ. «Թագավորն ապրած կենա ես կբժշկեմ քու տղին»:

Նայում ա ինչ եիվանդություն ա ե իսկապես բուժում ա: Թագավորն ասում ա. – Ի՞նչ ես ուզում, ի՞նչ ցանկանա կկատարեմ, քաջովդ մի ոսկի կտամ:

ՕՃնեցին թե. – Թագավորն ապրած կենա, ինձ հարստություն հարկավար չի, ես ժողովրդիս ցավով եմ էկե, ինձ մի քիչ պոք տուր, գնամ թշնամուն իմ երկրից քշեմ, որ ժողովրդիս չտանջի:

Թագավորը մնում ա պարմացած, չէր սպասում, որ պոք կուզի: Չորք տալը պալիտիկայի գործ ա, կարող ա թշնամություններ առաջացնի իրա դեմ, ինչ անի, որ դրանից ապատվի, խոսք ա տվել:

– Դե, – ասում ա, – որ խոսք եմ տվել, պոք կտամ, պայմանով, որ իմ պոքը տա-

նես, բոլորին սաղ հետ ընրես, օ՛ ռվ շսպանվի:

Օձնեցին տննում ա, որ էդ պայմանը դիտնամք ա անում, որ վախենա, չտանի: Մտածում ա, ստածում, հնարը գտնում ա. — Թագավորն ապրած կենա, ըսվ, կտանեմ, սաղ հետ կբերեմ: Հիսուն հազար ընտիր փորք տուր, փնամթերք տուր, տանես իմ ժողովրդին փինես, փորքիդ տանեմ ընդե կախացնեմ՝ թշնամուն սարսափ, իմ ժողովրդին էլ ոգևորություն:

Ձորքն առնում, գալիս ա, թշնամին սարսափում ա, որ հոռեսական քաջ փորք ա էկել, առն ընկնում ա մեջը, եայերն էլ ոգևորվում են, թե եայտնի պետության փորքը թիկունքներիս կանգնած ա, քաջանում, փնվում, սկսում են հույներին ջարդել, Լոռուց քջել ե Լոռին ապատել:

93. ԲԵՐԴ

(Թումանյանի շրջան)

Բերդ գյուղի տեղը ժամանակին եղել է Բագբառունի Կյուրիկյան Դավիթ Անիոլ թագավորի ամրոցը, որը ժամանակի ընթացքում վեր է ածվել լաթոռանիստ քարաքի: Հետագայում ամրոցն ավերվել ա թշնամիների կողմից, բայց գյուղը պահել է իբ անունը՝ Բերդ:

94. ՄԱՆԱՀԻՆ

(Թումանյանի շրջան)

Գյուղի անվան ծագումն ավանդաբար այսպես են բացատրում՝ Սա-նա-հին, սա նրանից հին բառերի միացումից է առաջացել, որ նշանակում է սա (Անանիինը) նրանից (Հաղպատ) հին է:

95. ՀԱՂՊԱՏ

(Թումանյանի շրջան)

Հաղպատ անունը գյուղի մեծերը կա-

պում են հստակաբանակ և պատ բառերի հետ: Ասվում է, թե Հաղպատի վանքը իսկական պատ է. կատարյալ կառուցվածք: Նա սիածամանակ եաղթանակի սրտ է. հաղթ սրտ, թ-ն սղվել է. ետդն ու սրտը միացել, ստացվել է Հաղպատ:

96. ԴՄԵՂ

(Թումանյանի շրջան)

Դսեղ անունը սկզբնական շրջանում եղել է Դրսեղ («Դրսի գյուղ, դուլասեղ», «Դվի գեղ») ձևով:

Ներքևից՝ Ձորի գեղից, բարձրացել են տախտերը, մյուս գյուղերից՝ ձորերով անջատված սարահարթը, և անվանել են բարձրության վրա, դրսում եղած գեղ, սրանից էլ՝ Դսեղ:

97. ԱՐԴՎԻ

(Թումանյանի շրջան)

Արաբները վեր Դվինը քարոքանդ են անում, ըտեղի ժողովրդին որին գերի են սանում, որն էլ փախչում են դես ու դեն: Կեսն էլ գալիս են ըսաի, տուն են շինում, գեղ գցում: Իբնեց հին բնակավայրի անունով նորը անվանում են Արդվին, ըսա իմաստի՝ Դվինից եկած:

98. ԱԿՆԵՐ

(Թումանյանի շրջան, նախկին անունը Որնակ)

1. Գեղատեղի վանքն առաջ ընրդ ա ըլել թաթարները եարձակվում են բերդի վրա, եամա չեն կարենում եաղթեն: Ուլում են ջրի ակները փակեն, որ ժողովուրդը ստիպված եանձնվի: Համա ջրի ակունքը ենդար խորն ա ըլլմ, որ չեն կարենում դեմն առնեն, մինը փակում են, մեկել յանովն ա ջուրը գընում դբա բերդը: Գեղի անունը տեհ էլ մնում ա Ակներ:

2. Առաջուց գյուղը Դրսևանքից երկու կիլոմետր ներքև ա ըլել: Ժողովուրդը էս վանքում ա պատասխարվել: Թշնամին հետաքրքրվել ա, թե ո՞րն ա ակը. որ փակի, մարդկանց ջրից փրկի, գրավի: Ո՞րն ա ակը, — Որնակ — առաջանում ա գյուղի անունը:

Հմի առում են Ակներ:

99. ՄՈՏԿՈՐ

(Թուամանյանի շրջան)

1. Մոտկորի ձորում են գտնվում Թումանյանի շրջանի Լորուտ, Շասուտ, Աթան, Ահնիձոր գյուղերը: Մոտկորի ձորը Լոռու գեղատեսիլ անկյուններից մեկն է, ծածկված ծառ ու ծաղկունքով: Առաջներում մութն ընկնելու պես ձորն ու նրանում գտնվող գյուղերը թաղվում էին սթուխան մեջ, ձորի անունը դրանից էլ առաջացել է. մթնում կորած բառերից, որի սղումից առաջացիլ է Մոտկոր անվանումը:

2. Մոտկորա գեղատեղը խիտ ծմակի մեջ ա էլել, ծմակը գիշեր-ցերեկ մութն ա էլել, մարդիք տնից, գեղից որ քիչ հեռացել են, էլ կարացել չեն թափա գեղը գան, ձեն են տվել, որ գեղից ձեն եանող ըլի, ձենի կոան վրա գան, գեղը գտնեն: Կամ էլ տեղներումը մնացել են կանգնած, ոը մի շուն հաչի, որ-ձակ կանչի, ձենին գան, գեղը գտնեն: Կանչողը ձեն ա տվել. «Կորա, կորա, քոմակ արեք»:

Գեղից ձեն են տվել. «Որդի ես, որդի կորարը»:

Մարդիկ պատասխանել են. «Մոտիկ եմ, մոտիկ կորա»:

Քարափի միջից ձենը պատասխանել ա՝ Մոտկորա, մոտկորա...

Գեղեցիկ ծմակի անունը դրել են Մոտկորա ծմակ, գեղի անունն էլ՝ Մոտկորա գեղատեղ:

3. Մի մարդ գիշերը դուս ա գալի ջրվեթի, հարեանի շունը հաչում ա. մարդը վախից գնում ա անտառի կողմը, շունը դրա հետևից: Մարդը բարձրանում ա ծառը, օգ-

նություն ա կանչում. «Վա՛ր, կորա. քոմակ արեք, կորա»:

Մի ուրիշ մարդ տանից դուս ա գալի, կանչում ա. «Այ տղա, էդ ո՞վ ես. էդ որդի՞ ես, ի՞նչ ա պըտահել, տեղդ ասա, ասա՝ գաս»:

Ծառի վրից մարդը պատասխանում ա. «Մոտիկ եմ, մոտիկ կորա, մոտիկ կորա»:

Ձենը ընկնում ա ծմակը, արձագանք տալի՝ մոտ կորա, մոտ կորա...

Դրանի տեղի անունը դառնում ա Մոտկորա ծմակ:

100. ԱՀՆԻՁՈՐ

(Թուամանյանի շրջան)

1. Գյուղի հողերը թագավորական են ըլել: Ամբողջ Մոտկորը՝ Մարցը, Լորուտը, Աթանը հարկ են տվել եկեղեցուն: Այս գյուղի մարդիկ ափսափուր են ըլել, անգամ եկեղեցու հարկահավաք, դաժան ու անամոթ Ռոստոմ Թումանյանը ոխակ չի արել մտնելու էդ գեղը, գեղացիք եկեղեցուն հարկ չեն տվել: Թրվրպի գուրերնին կարծել ա, թե գյուղը եարկը տալիս ա Գանջային կամ Դիլիջանին, սրանք էլ կարծել են, թե հարկը տալիս են էջմիածնին: Գյուղի տեղը իմացող չի էլել, ասել են Ահնիձոր:

2. Ահնիձոր կամ Ահնիպոր անունն առաջացել ա էսպես: Մարդիկ որոշել են ձորում գյուղ ելամնել, գնացել են իրանց քուլփաթը, ունեցած-չունեցածը բերելու: Կանսիք եկել են, տեհել, մի մութ ծմակ ձորի մեջ, գեղ են եիմնելու, վախեցել են, ասել են. «Քշերը ահալու, փոր ահալու, էս ինչի էկանք էս վիրունի տեղը»:

Գեղի անունը կպել ա Ահնիպոր (ահալու օր, տեղ):

3. Երբ այս ձորում գյուղ է եիմնվում, հարեան գյուղերից մարդիկ են գալիս տեսնելու համար, թե ինչպես են ապրում իրենց բարեկամները նոր գյուղատեղում: Ժամանակն աշնան կողմն ա լինում, թուխպ ու մառախլապատ օր, անտառից ցերեկով գապանների ոռնոց, ձորից ջրի վշշոցը

խառնվում են իրար և վարպանդեցնում
մարդկանց: Հետդարձին. վախը
սրտներում, մարդիկ անընդհատ կրկնում
են. «Ասպու ձոր. անսպու ձոր...»:

Դրանից էլ Աննիձոր անունն ա ստա-
նում գյուղը:

101. ԾԱԹԵՐ

(Թումանյանի շրջան)

Ծաթեր գյուղը ջրի պակաս է ունեցել,
գյուղից ներքե, քարափի տակ, ձորում սի
քարակ աղբյուր կար, որի ջուրը կաթիլի
նման ձյութում է քարափի միջից: Գյուղացի-
ներն իրենց ջրի ամանները տարել են,
հերթի դրել, եկել են գյուղ իրենց գործին և
ուշ վերադարձել են. երբ իրենց ենթաթը
հասել է, ջուրն առած եկել են տուն:

Ավանդությունը պատմում է, որ մի ան-
գամ գյուղի կանանցից մեկը, երբ գնում է
ջրի, տեսնում է հարեանի աղջիկը ջրա-
մանով վերադառնում է, եարցնում է, թե իր
հերթը չի՞ եսսել, սա պատասխանում է, թե՝
ոչ, որովհետև ջուրը կաթ-կաթ է գալիս: Աղ-
ջիկը թրվատ է լինում, կաթելու փոխարեն
ասում է՝ ջուրը ծաթեր: Նրա պատասխանը
յսում են հարեան գյուղի մարդիկ և կրկնում
են՝ ծաթեր-ծաթեր:

Դրանից էլ գյուղի անունը մնում է
Ծաթեր:

102. ՃՈՃԿԱՆ

(Թումանյանի շրջան)

Լեզգիները հարձակվում են գյուղի վրա
և սկսվում է կոտորածը: Գյուղը տեղավոր-
ված էր ձորի մեջ և նրա ավերին, ուներ
ճոճքի տեսք, գյուղացիք վազում են լանջն ի
վեր և ճվճվում են:

Դրանից էլ առաջանում է գյուղի
անունը՝ ճոճկան:

103. ՂԱԶԱՂԱՆ

(Թումանյանի շրջան, նոր անունը Արևածագ)

Չորս ախպեր Ղաղախա կոնիցը գալիս
են Լասրաղու, ըստի շատ ջոգ ա ըլլմ,
բրախըս են. գալի հարևան բերպենների
գեղը՝ Կողես: Մի քանի վափոտ ըստի սալլում
են, ասա տենըմ են էս բերպենին իրանց
թարս աչքով են մտիկ տալի. բրափում են.
գալի սի առանձին տեղ, գեղ գյըմ. անըմը
դընըմ Ղաչաղան: Մթամ ու իրանք դաչաղի
նման փախել են գեղից գեղ, մինչև իրանց
եմա գեղ են եիմնել:

104. ՍԱԴԻԲԱԳԴԻ

(Թումանյանի շրջան, նոր անունը Ջգալով)

1. Գեղատեղը ձեռք է բերել Սարիբեկը և
անվանել է Սարի բեգի գումեր: Հետագայում
էդ բառերի միացումից ու փոփոխությունից
գյուղի անունը դարձել է Սաղիբագղի:

2. Գյուղի չորս կողմը փոսեր կան, բա-
գեր, որոնք եավանաբար առաջացել են
կրկնվող պատերազմներից: Դսեպցիները
դրանք անվանել են սարի բագեր: Դրանից
էլ առաջացել է գյուղի անունը՝ Սարիբագղի:

105. ՔԱՐԻՆՁ

(Թումանյանի շրջան)

1. Գյուղը քարերի մեջ են սարքել, քարա-
փի տակ, ասել են քերխնջ:

2. Թուրքի, պարսիկների, լեզգիների
հարձակումներից պաշտպանվելու ետևար
ժողովուրդը փախել ա ծմակը, քարափների
մեջ, ձորի մեջ, որ հեռվից գյուղը չերևա:
Հեռվից եկածները նայում էին գյուղին,
հարցնում էին՝ էս ի՞նչ ա: Տեղացիք պա-
տասխանում էին՝ քա՛ր ա, ի՞նչ ա: Սրանց
ձեռ են առնում, կրկնում՝ քա՛ր ա, ի՞նչ ա:

Դրանից էլ մնացել ա Քարինջ տեղա-
նունը:

106. ԱԹԱՆ

(Թուժանյանի շրջան)

1. Անցյալում գյուղում եկեղեցի է եղել սյատին՝ «Այս եկեղեցին կառուցեց Վաթանանյես վարդապետը» արձանագրությամբ: Ժամանակի ընթացքում վարդապետի անունը աղավաղվել ա, դարձել Աթան, գյուղի անունն էլ սնացել ա Աթան:

2. Աթանես անունով մի տիրացու պավակներ չի ունեցել, որոշել է իր միջոցներով գյուղում եկեղեցի կառուցել: Հարեան գյուղերից եկել են այստեղ կնուներ, պսակադրության, երդում տալու, մեռել թաղելու: Ասել են՝ գնանք Աթանեսի եկեղեցին, դրանից էլ գյուղի անունը մնացել է Աթան:

107. ՇՆՈՂ

(Թուժանյանի շրջան)

Գյուղը գտնվում է Կայծոն ամրոցին կից լանջերում: Գյուղի մոտակա գետակի եողատարածությունները ոռոգելու շնորհիվ գյուղը շենացել է, հարստացել բերքով, որի եամար էլ գյուղը կոչվել է Շնող:

108. ՈՒՋՈՒՆԼԱՐ

(Թուժանյանի շրջան, վերականգնված է հին անունը՝ Օձուն)

Գյուղի մի ծայրից մինչև մյուս ծայրը ձգված է անանյանեկի ձոր՝ վեջերին խոշոր քարածայրեր: Գյուղն անունը ստացել է այդ երկար ձորի անունից:

109. ՀԱԳՎԻ

(Թուժանյանի շրջան)

Ըստ գյուղի մեծերի Հագվի անունն առաջացել է եակվել րառից: Շրջակա գյուղերից՝ Օձունից, Ամոջից որոշ տներ դուրս են

եկել ա եակվել դեպի Հագվի գյուղատեղը: Հետագայում եակվելը դարձել է հագվել, իսկ ավելի ուշ ալ վերջավորությունը վեր է ածվել ի վերջավորության ա գյուղի անունը դարձել է Հագվի:

110. ԹԵՂՈՒՏ

(Թուժանյանի շրջան)

Թեղուտը անցյալում եղել է Շնող գյուղի գոմաեանդը՝ ձսեռանոցը: Այդ տեղամար ծածկված է եղել թեղի ծառերի անտառով, որից ա առաջացել է գոմաեանդի անունը:

111. ԼՈՐՈՒՏ

(Թուժանյանի շրջան)

Լորուտ գյուղի անունն առաջացել է այդ վայրում գտնվող լորենու ծառերի անտառի առկայությունից:

112. ԿԱՃԱՃԿՈՒՏ

(Թուժանյանի շրջան)

Կաճաճկուտ գյուղն անցյալում եղել է Աքորի գյուղի գոմաեանդը: Գյուղն իր անունը ստացել է եանդամասում մեծ չափով գաճաճ բույսեր աճելու կապակցությամբ:

113. ՂԱՐԱՔԼԻՍԱ

(Գուգարք, վերականգնված է հին անունը՝ Վանաճոր)

1. Ավապակախումբը, երբ եարձակվում է գյուղի վրա, ժողովուրդը լցվում է եկեղեցին ա ամուր փակվում: Ավապակները ջանում են ներս մտնել, կանանց ու աղջիկներին առեանգել, րայց դրսից օգնության են եասում, ավապակապետին կապկպում, որ դատեն: Ավապակապետը նախում է համատա-

րած դիակներին և տեսնում է. որ ոչ որ իրեն օգնության չի հասնում, բացականչում է՝ դարա-քրիսա (սե եկեղեցի), որի ինաստն էր, թե եկեղեցուն սե գործ կատարվեց:

2. Մեկ այլ ավանդություն Ղարաքրիսա անունը կապում է սե քարից կառուցված եկեղեցու գույնի եետ. որի եասար տեղավայրը ստացել է Ղարաքրիսա անունը:

114. ԴԱՐՊԱՍ

(Գուգարքի շրջան)

Դարապաս պարսկերեն րաո է և նշանակում է սեծ դուռ:

Գուգարքի շրջանի Դարապաս գյուղը գտնվում է Լեոնապատ գյուղին մոտ. Թբիլիսի-Երեան երկաթգծին կից: Նա դարապաս է հանդիսացել վերոնիշյալ տեղավայրերի համար, որից և առաջացել է գյուղի անունը:

115. ԶՈՐԱԳՅՈՒՂ

(Գուգարքի շրջան)

Գյուղը նախկինում գտնվել է այժմյան գյուղի տակի ձորում, դրանից էլ ստացել է Ձորագյուղ անունը:

116. ՀԱՄՁԱՋԻՄԱՆ

(Գուգարքի շրջան)

Գյուղը գտնվում է ծաղկուն մարգագետնի վրա, դրա համար կոչվել է Համղաչիման:

Առաջներում այն կոչվել է Բուլի գյուղ, գեղատեղում րնակչություն չի եղել: Շատ խոտ ա եղել: Առանց հնձերու մնացած խոտը աշնանը րուլին ա տվել: Հարեան գյուղացիք ասել են՝ րուլին տվող գյուղը, և առացել ա Բուլի գյուղ անունը:

117. ՎԱՐԴԱՆԼՈՒ

(Գուգարքի շրջան)

Մեծերը պատմում են, որ Նոյսերբյանի շրջանի Բաղանես գյուղից Վարդանը գալիս է Գուգարքի շրջան, սի հին գյուղատեղում րնակություն եաստատում: Գյուղն այս անունով կոչվում է Վարդանլու:

118. ՋԱԼԱԼՕՂԼԻ

(Ստեփանավանի շրջան, Ստեփանավան)

Ջալալօղլի կոչվել է նրա հիմնադիր Ջալալի իշխանի որդի՝ Ջալալ օղլու անունով:

Առաջներում Ջալալօղլու ձորի ճանապարհի վրա խաչարձան է եղել. «Կանգնեցավ խաչս ի Ջարայե իշխանն» արձանագրությամբ: Ջարալօղլու հին րնակիչների վկայությամբ գերեզմանոցում գտնվում են Ջարալի և Ջալալ օղլու գերեզմանները:

Հետագայում Ջարալօղլին վերանվանվել է Ստեփանավան:

119. ԶԳՐԱՇԵՆ

(Ստեփանավանի շրջան)

Զգրաշեն գյուղատեղի րնակիչները աղոթելու, եարսանիքի, թաղման ևամար գնում էին հարեան Ագարակ գյուղի եկեղեցին: Մի օր էլ ագարակցիք կանգնում են և թույլ չեն տալիս նրանց օգտվելու իրենց եկեղեցուց, որպեսզի իրենց համար եկեղեցի կառուցեն: Զգրաշենցիք կառուցում հն իրենց եկեղեցին և գյուղն էլ եկեղեցու անունով կոչում Զգրաշեն:

120. ԳՅԱՌԳՅԱՌ

(Ստեփանավանի շրջան, նոր անունը Պուշկինո)

Կրիվոյի, Ստեփանավան քաղաքի ռուսական հատվածի և շրջանի ռուսական գյուղերի նախնիները քսանհինգ և ավիլի տարվա պիևվորներ են եղել Լոռում: Հավանելով

« Սպիտակից:

տեղի կլինան, առատ հողային և արտադարարային տարածությունները, նրանք պաշտոնաթող լինելուց հետո չեն վերադարձիլ հայրենիք, այլ ընակություն են հաստատել այդ գյուղերում:

Ա.Ա.Պուշկինը Թրիլիսիից էրպրում ճանապարհին սլոյելել է այստեղ:

121. ՖԻՈԼԵՏՈՎ

(Ստեփանավանի շրջան)

Առաջներում այս գյուղը կոչվելիս է եղել Նիկիտինո, իսկ սեր ժամանակներում այն վերանվանվել է Բաքվի քսանվեց կոմիսարներից մեկի՝ Ֆիոլետովի անունով:

122. ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԵՎ ՀՈՐԱՐՁԻ

(Ստեփանավանի շրջան)

1. Ավանդարար պատմվում է, որ Վարդարյուր գյուղի անունը ծագել է վրաց Կորքի հայ Կորավար Վարդանի անունից, որը թշնամիների դեմ մղած սարտերում սպանվում է թաղվում Վարդարյուրին կից բլրի վրա: Հետագայում Վարդան և բլուրը բառերի միացումից առաջանում է գյուղի Վարդարյուր անունը:

Վարդան Կորավարի եղբայրը՝ Համրարձումն էլ է այս սրտերապում սպանվում և թաղվում է Հորարձի գյուղատեղում, նրա անունով այդ վայրը կոչվում է Համրարձում: Այդ անունը ժամանակի ընթացքում ձևափոխվելով դառնում է գյուղի Հորարձի անունը:

2. Հորարձի գյուղի անունն առաջացել է այս տարածքի սեփականատեր, շրջանում հայտնի Հորոսի անունից:

123. ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ

(Ստեփանավանի շրջան)

Գյուլագարակ բառը կապված է գյուլ* և

* Պարսկերեն նշանակում է վարդ:

ագարակ հայերեն բառից:

Հավանական է, որ գյուղի անունը նշանակում է միջին ագարակ: Քանի որ Վարդարյուրին կից եղել է Ագարակ գյուղը, սրում գյուղը գտնվել է Չորագետի ձախ ափի սարահարթի վրա: Այս երկու Ագարակ գյուղերի մեջ էլ ընկնում է Գյուլագարակը:

124. ԿՈՂԵՍ .

(Ստեփանավանի շրջան)

Կողես գյուղի շրջակայքում, իրազ կողքի, եղել են հին գյուղատեղեր: Գյուղատեղերի այս շարքը նմանեցնելով մոզեսների, գյուղն էլ այդ անունով կոչվել է Սողես, սա էլ վերածվելով դարձել է Կողես, իսկ գյուղի հին մաքրիկ գյուղն անվանել են Կողեսներ:

125. ԿՈՒՐԹԱՆ

(Ստեփանավանի շրջան)

1. Անյայ դարում գյուղը կոչվել է Կորդան, այսինքն՝ պինդ, անմշակ, խոպան հող: Մինչև օրս լոռեցիք կորդ ածակունը օգտագործում են այդ իմաստով: Հետագայում Կորդանը դարձել է Կուրթան:

2. Պարսպ քոյսվեն ապրելու տեղ չի ունեցել, գնացել և Ուզունլար, ասել են՝ մենք գյալմա չենք ընդունում, գրնըմ և Դսեղ, էդտեղ էլ դրան չեն ընդունում: Հարաետյալ գրնըմ և Ջալաթոյի: Անցնելու ժամանակ ձիու կրոր նալ և գտնում, ասում և. «Ըստի մարդ պտի ապրելիս ըլի»: Ման գալով գալիս և եկեղեցին, գերեզմանոցը: Հետո գալիս են իրեք ախպերները՝ Ղաիջը, Դավիթը, Դանելը, իրանց անունները ապգանունների են փոխում, որ գյուղ հիմնվի, պարսպ քոյսվեն էլ դառնում և գյուղի քոյսվա:

Գյուղի անունը նշանակում է Գյուրդան* կամ Կուրթան*:

* Պարսկերեն նշանակում է վառ և մեջ:

* Ըստ հացաեաաիկ, ձորի բերան:

126. ՀԱՄԲՈՑԻ ԳՑՈՒՂ

(Ստեփանավանի շրջան)

Կուրթանը շրջանում այլ կերպ կոչվում է Համրոլի գյուղ:

Կուրթանի առաջին բնակիչները երեք եռվիվ են եղել, դրանց ոչխարների հոտերը կտրկան էին (մառախուղով ծածկվում էին), և սրանք կանչում էին իրար. «Արա Համրո, գսա՛ր ոչ, արա Համրո, գտա՛ր ոչ...»:

Ջալալօղլիք լսում են, գյուղն անվանում են Համրոլի գյուղ:

127. ՆՈՐԱՇԵՆ

(Ստեփանավանի շրջան)

Բնակիչները գաղթել են Արաշկերտից, Մխիթար վարդապետի առաջնորդությամբ նոր բնակավայր են հիմնել, անունը դրել Նորաշեն:

128. ՍԱՐՁԱՊԵՏ

(Տաշիրի շրջան)

Տեղավայրի բարձունքում շատ ճնճղուկներ են բնակվել*, դրանից էլ գյուղը կոչվել է Սարչապետ:

129. ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

1. Ջալալօղլում եղած օրերին Անդրանիկ փաշան իմանում է, որ տեղում շատ եայ որրեր կան: Նա եավաքել է տալիս որրերին և իրենց ձիերի թամբերին առած, իջեցնում են Քորսգիրան կայարանը, եանձնում կայարանապետին, որ ուղարկի Թիլվիս:

2. Ջալալօղլում Անդրանիկ պորավարն իմանում է, որ բնակչությունը սուր վիճեր է մղում քաղաքական տարրեր հոսանքներին պատկանելու հարցում, դիմում է իրեն դի-

* Սարչա պարսկերեն նշանակում է ճնճղուկ:

սավորելու երաժ տեղի հայկական կայապոլիսն ու բազմությունը և ասում է. – Լսել եմ, որ երկու օր առաջ այստեղ ընդհարումներ են եղել սեծասանականների, փոքրասասանականների և դաշնակների միջև: Նախ կովենք մեր գոյությունը պաշտպանելու իրրե արգություն:

3. Լոռու Վորոնցովկա (այժմ Կալինինո) գյուղում Անդրանիկ փաշալի պորքը անցնելու ժամանակ երկար մորուքներով ու երկարաձիտ ոտնամաններով մալականներից ոմանք իրենց ձեղուններից գաղտագողի կրակում են նրանց վրա: Անդրանիկը, ձիու գլուխը շուռ տալով, ասում է. – Էրկեն գեղթե մեկ էլ ետ դարձա. դու իմ ձեռքից նստ պրծնի, կկարճացնեմ:

4. Անդրանիկ փաշան իր պորքով որոշ ժամանակ մնում է Դսեղում: Դսեղում եղած օրերին վիսվորական բարձր կենտրոնից նրան հրաման է գալիս, որ իր լողքով մնա այդտեղ և պաշտպանի երկաթուղու գիծը: Դսեղից Անդրանիկն իր պորքով իջնում է Մալց: Մոսկոբի գեղատեսիլ և մթին անասունի միջով, կարկտախառն անձրեի տեղատարափի տակ, նա հսկում է երկաթգծի անվտանգությունը:

130. ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ ՈՒ

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Ալեքսանդր Մակեդոնացին աջխարհի վառելին գալիս ա, գալիս ա, որ հասնում ա Հայաստան, Հայաստանի տեր ու սիրելիսը Խիկար Իմաստունն ա ըլում: Խիկար Իմաստունին Ալեքսանդր Մակեդոնացին լավ ա ճանաչելուս ըլում, նա էլ նրան: Իրար եես սովորած են ըլում: Խիկար Իմաստունը կարգադրում ա, որ խալիները փոեն, ֆրանսերեն գրեն՝ շնորհավորում ենք Ալեքսանդր Մակեդոնացու բարի գալուստը: Ալեքսանդր Մակեդոնացին որ գալիս ա, հասնում, տենում էդ բոլորը, մատը կծում ա, ասում ա՝ էս Խիկար Իմաստունի արած գործն ա: Հրամայում ա պորքին՝ մտիր էս

քաղաքը, ոնց որ ձեր սալորենի քաղաքը: Մալ-
րաքաղաքը 'Իմինն ա ըլում: Խիկար Իսաս-
տունը, հրապարակումը մի սիհնձ, շատ հին,
կողքն էլ ծակ կարաս ա ըլում, ստնում ա
սեջը, որ տենա Ալեքսանդր Մակեդոնացին
ոնց ա գալի: Ալեքսանդր Մակեդոնացին որ
տեղ ա հասնըմ, թուրը հանըմ ա, դընըս էդ
կարասի գլխին, ասըմ ա. «Կարաս, չնայած
շատ հին ես, կողքդ էլ՝ ծակ, բայց սեջըդ լիքն
ա իմաստոթյունով»: Միջից Խիկար Իսաս-
տունը պատասխանում ա. «Ալեքսանդր Մա-
կեդոնացի, լավ ա ունենալ մի կաթիլ ռախտ,
քանց մի կարաս դարդակ իմաստոթյուն»:

131. ՋԻԼՂԱՐ ԻՍԿԱՆԴԱՐԸ

Ջիլղար Իսկանդարը գլխի կես տեղը պո-
պեր ուներ. ինչ դալլաք, որ նրա գլուխը վեր
աներ, գլուխը տեր, պաղվալումը ֆոր աներ,
գցիք միջը: Էկավ մի հատ դալլաք, օխտը աղ-
ջիկ ուներ, ասավ. — Ջիլղար Իսկանդար,
այլի իմ աղջկերանց արինը մի ընգնիր, իմ
գլուխս տալ մի, քու սրոը ես դուս չեմ տա:

— Լավ, — ասավ, — դալլաք, ես եավատա-
ցած եմ, գնա, տերը քու հետ:

Գլուխը վեր առավ, պրծավ, էդ մարդը
ճամփա ընգավ, գնաց իրա գործին: Էկավ,
էդ մարդը չէ սրոը պաեում ա իրա փորին,
էկավ, ուռավ, դոխտուր, ջաննա՝ ճար չկա:
'Իալլաքը գնաց, տեհավ մի հատ ֆոր կու,
ջրֆոր, չորսի կուտը չղեր կա, դագի չեղ, մի
հատ սկու շինեց ու գլխի վրա քաշեց, էլավ.
«Ջիլղար Իսկանդարը պոպ ունի ես, պոպ
ունի»:

Դոշումը մի հատ չոբան կար, նա էլ ըտե
շեուն ածում ա, նա էլ ա ասում. «Ջիլղար Իս-
կանդարը պոպ ունի, պոպ ունի»:

Դալլաքի թուրը ըրնումը չորացավ: Իս-
կանդարը հսկացավ, ասավ. «Սա սրորս դուս
հանեց»:

Մտիկ արագ. տեհավ չոբանն ըտի շիուն
ածում ա, շիունի սիջին տալիս ա. «Ջիլղար
Իսկանդարը պոպ ունի, պոպ ունի»:

Իսկանդարը կսնչեց դալլաքին, ասավ. —
Սրոըս ասել ես:

Ասավ. — Ասունագինա ասել չեմ. բայց
սին, սեն:

Գնաց, կոնիցը բոնեց ֆորի չղերը շանց
տվեց, տեհան չղերը ձեն են տալի. «Ջիլղար
Իսկանդարը պոպ ունի, պոպ ունի, պոպ
ունի»:

Ջիլղար Իսկանդարը թուրը քաշեց
իրանն ապանեց: Էդ սարդը պատվեց:

132. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

1. Աստված արու կենդանիներին սեռա-
կան անդամներ ա բաժանում: Ամենից շուտ
էշն ա գընում, նրան մեծ բաժին ա ընգ-
նում: Վերջը գընում ա ուղտը: Տեսնելով, որ
իր բաժինը շատ փոքր ա, խոզովում ա, ետ ա
դառնըմ, որ գնա: Աստված բարկանում ա
ուղտի վրա, եետեից շպրտում ա, ե այն
գնում, կպչում ա ուղտի պոչի տակից:

2. Արջն ու մարդը ախպերացան: Մի ան-
գամ արտը ենձելուց հետո մարդը պատկում
ա մի քիչ դինջանա: Ճանձը իջնում ա
մարդու ճակատին: Արջը քարը վերցնում,
խփում ա, որ ճանձին սպանի: Բայց ճանձը
թոչում, գրնում ա, իսկ մարդը՝ մեռնում:

Դրա հմար էլ, երբ մարդ անկախ իր
կամքից մարդու վնաս ա տալիս, ասըմ են՝
արջի ծառայություն ես մատուցում:

3. Երբ սկսեցին թոչուններին հալածել,
չղիկը թեերը քաշեց ե ասաց. «Ես մուկ եմ»:

Հենց որ մկներին սկսեցին եալածել,
թեերը րացեց ե ասաց. «Ես թոչուն եմ»:

